Luys Lույս®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ – 2023

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ «ՀԵՐԻԹԵՅՋ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ԶԵԿՈՒՅՑԻ (2023Թ.) ՀԻՄԱՆ ՎՐԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 1

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 2

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ 6

3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 8

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ 12

ԱՄՓՈՓՈՒՄ 16

ՆԱԽԱԲԱՆ

Բոլոր երկրներում իշխանության հիմնական նպատակներից մեկը պետք է լինի անձի ազատության (այդ թվում՝ նաև տնտեսական ազատության) պատշաճ մակարդակի ապահովումը: Այդ իսկ պատճառով մեծ կարևորություն են ստացել տնտեսական ազատության աստիճանը չափելու և գնահատելու, ինչպես նաև միջերկրային և միջժամանակային համեմատություններ կատարելու խնդիրները, որոնցով զբաղվում են ինչպես շատ երկրների ազգային մասնագիտացված կառույցներն ու ակադեմիական հաստատությունները, այնպես էլ միջազգային տարբեր հեղինակավոր կազմակերպություններ: Առավել հայտնի է «Հերիթեյջ» հիմնադրամի (The Heritage Foundation) կողմից 1995 թվականից ի վեր հրապարակվող «Տնտեսական ազատության ինդեքս» ամենամյա զեկույցների շարքը, որոնցում գնահատվում է աշխարհի տարբեր երկրներում տնտեսական ազատության աստիճանը, ինչպես նաև հնարավորություն է ընձեռվում իրականացնելու միջժամանակային և միջերկրային համեմատություններ: Հիմնադրամն օրերս հրապարակել է «Տնտեսական ազատության ինդեքս - 2023» զեկույցը[1] (այսուհետ՝ Զեկույց):

Զեկույցի կազմման համար հիմք են հանդիսացել աշխարհի 176 երկրների վերաբերյալ 2021թ. երկրորդ կիսամյակի և 2022թ. առաջին կիսամյակի տվյալները:

Զեկույցում նշվում է, որ համավարակը և Ուկրաինայի տարածքում ռազմական գործողություններն ամբողջ աշխարհում հանգեցրել են տնտեսական ազատության սկզբունքներից շեղման: Մինչդեռ, այդ սկզբունքները լուրջ նշանակություն ունեն տնտեսությունների զարգացման և աճի խթանման գործում: Ըստ Զեկույցի՝ սովորաբար, որքան ավելի տնտեսապես ազատ է հասարակությունը, այնքան ավելի մեծ են տնտեսական գործունեություն իրականացնելու հնարավորությունները, բարձր են կենսամակարդակը և կյանքի որակը, ցածր է աղքատության մակարդակը:

Համաձայն Զեկույցի՝ տնտեսական ազատության համաշխարհային ինդեքսը նախորդ ժամանակահատվածի համեմատ վատթարացել է 0.7 միավորով և 100 հնարավորից կազմում է 59.3 միավոր, ինչը վերջին երկու տասնամյակի նվազագույն արժեքն է: Ինչպես և նախորդ զեկույցում, այս տարի ևս նշվում է, որ, չնայած համաշխարհային տնտեսական ազատության նկատելի անկմանը, դրա բարելավման և բարեկեցության աճի միջև դրական կապը շարունակում է պահպանվել:

[1] Զեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.heritage.org/.../Economic Freedom Index-2023.pdf

Հայաստանի 2023թ. տնտեսական ազատության ինդեքսը (այսուհետ՝ ՏԱԻ) նախորդ տարվա համեմատ նվազել է 0.2 միավորով և կազմել 65.1 միավոր: Սա 2001 թվականից ի վեր Հայաստանի ամենացածր ՏԱԻ-ն է:

Հաշվի առնելով խնդրի կարևորությունը՝ «Լույս» հիմնադրամը շարունակում է տնտեսական ազատության ինդեքսի վերլուծությունների շարքը[2]: Սույն վերլուծության առաջին մասում հակիրճ նկարագրվել է տնտեսական ազատության ինդեքսը և դրա հաշվարկման մեթոդաբանությունը: Այնուհետև ներկայացվել է Զեկույցի՝ աշխարհին վերաբերող առավել ուշագրավ տեղեկատվությունը: Վերլուծության երրորդ բաժնում վերլուծվել են Հայաստանի ՏԱԻ-ն և դրա բաղադրիչները: Հաջորդ բաժնում կատարվել են Հայաստանի և որոշ երկրների տարածաշրջանային համադրումներ: Վերջում ներկայացվել է ուսումնասիրության ամփոփումը:

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական ազատության ինդեքսը տնտեսական ազատության գնահատման ագրեգացված ցուցանիշ է, որը հաշվարկվում է որպես 12 ենթաինդեքսների միջին թվաբանական: Ընդ որում, այդ ենթաինդեքսները դասակարգվում են 4 հիմնական խմբերում՝ **<u>օրենքի գերակայություն</u>**, **<u>պետական հատվածի կշիռ</u>**, **<u>կարգավորումների արդյունավետություն</u>** և **<u>շուկայի բացություն</u>** (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Տնտեսական ազատության ինդեքսի կառուցվածքը



[2] Վերլուծությունները 2019-ից ի վեր, տարեկան պարբերականությամբ, էլեկտրոնային տարբերակով հասանելի են «Լույս» հիմնադրամի պաշտոնական կայքում՝ https://bit.ly/3BA9Obe:

ՏԱԻ-ի 12 ենթաինդեքսները որոշակի վիճակագրական ցուցանիշների ագրեգացման հիման վրա գնահատվում և ստանդարտացվում են 0-100 միջակայքում, որից հետո հաշվարկվում է ընդհանուր ինդեքսը՝ որպես դրանց միջին թվաբանական, որը արժեքներ է ընդունում, բնականաբար, նույնպես 0-100 միջակայքում: Ըստ ՏԱԻ-ի արժեքի երկիրը ընդգրկվում է հետևյալ հինգ խմբերից մեկում՝

- տնտեսապես ***«ազատ»*** երկրներ՝ ՏԱԻ-ի 80 միավոր և ավելի արժեքներ,
- տնտեսապես ***«հիմնականում ազատ»*** երկրներ՝ ՏԱԻ-ի 70-79.9 միջակայք,
- տնտեսապես ***«չափավոր ազատ»*** երկրներ՝ ՏԱԻ-ի 60-69.9 միջակայք,
- տնտեսապես ***«հիմնականում ոչ ազատ»*** երկրներ՝ ՏԱԻ-ի 50-59.9 միջակայք,
- տնտեսապես ***«ճնշված»*** երկրներ՝ ՏԱԻ-ի 49.9 միավոր և պակաս արժեքներ:

Հակիրճ նկարագրենք ՏԱԻ-ի 12 ենթաինդեքսները:

1. Սեփականության իրավունքի պաշտպանություն: Այս ենթաինդեքսը գնահատում է, թե երկրի օրենսդրական դաշտը որքանո՞վ է հնարավորություն ընձեռում ձեռք բերել, տիրապետել և տնօրինել մասնավոր սեփականություն, որքանո՞վ են այդ իրավունքները գործող օրենսդրությամբ երաշխավորված, և արդյո՞ք իշխանությունն ապահովում է այդ օրենսդրական դաշտի նորմալ գործողությունը:

Ենթաինդեքսը հաշվարկվում է որպես հետևյալ երեք ենթագործոնների գնահատումով ստացվող արժեքների միջին թվաբանական՝

- *մասնավոր (նյութական) սեփականության բռնագրավման ռիսկ,*
- *մտավոր սեփականության պաշտպանվածության մակարդակ,*
- *պայմանագրերի, սեփականության իրավունքի և օրենքների կիրառելիություն:*

2. Արդարադատության արդյունավետություն: Ենթաինդեքսով գնահատվում է երկրում քաղաքացիների իրավունքների երաշխավորվածության, ինչպես նաև հակաօրինական գործողություններից դրանց պաշտպանվածության մակարդակը: Այն հաշվարկվում է որպես հետևյալ երեք ենթագործոնների գնահատումով ստացվող արժեքների միջին թվաբանական՝

- *դատական համակարգի անկախություն,*
- *դատական գործընթացի որակ,*
- *հանրային ծառայությունների որակի և քաղաքացիական ծառայության անկախության վերաբերյալ ընկալումներ:*

3. Կոռուպցիայի բացակայություն: Հաշվի առնելով, որ տնտեսական ազատության վրա խիստ բացասաբար է ազդում կոռուպցիան, հաշվարկվում է «Կոռուպցիայի բացակայություն» ենթաինդեքսը՝ որպես հետևյալ երեք ենթագործոնների գնահատումով ստացվող արժեքների միջին թվաբանական՝

- *կոռուպցիայի ընկալման մակարդակ,*
- *կաշառակերության ռիսկ,*
- *կոռուպցիայի (ներառյալ էլիտաների և այլ խմբերի կողմից պետության «զավթումը») վերահսկում:*

4. Հարկային բեռ: Այս ենթաինդեքսով գնահատվում է, թե կառավարությունը հարկային բեռի միջոցով որքանո՞վ է սահմանափակում տնտեսական ակտիվությունը: Այն հաշվարկվում է որպես հետևյալ երեք ենթագործոնների գնահատումով ստացվող արժեքների միջին թվաբանական՝

- *եկամտային հարկի դրույքաչափի վերին սահման,*
- *շահութահարկի դրույքաչափի վերին սահման,*
- *հարկեր/ՀՆԱ հարաբերակցություն:*

5. Պետական ծախսեր: Ենթաինդեքսի նպատակն է՝ գնահատել, թե որքանո՞վ է տնտեսական ազատությունը սահմանափակվում պետական ծախսերի պատճառով: Համարվում է, որ պետական ծախսերի բարձր մակարդակը պարունակում է մասնավոր հատվածի տնտեսական ակտիվության նվազման ռիսկեր: Ենթաինդեքսը հաշվարկվում է որպես *«պետական ծախսեր/ՀՆԱ»* ցուցանիշի վերջին երեք տարիների արժեքների միջին մեծության ոչ գծային ստանդարտացման արդյունք:

6. Հարկաբյուջետային կայունություն: Ենթաինդեքսը հաշվարկվում է որպես հետևյալ ենթագործոնների գնահատումով ստացվող արժեքների կշռված միջին՝

- *պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցության վերջին երեք տարիների միջին արժեք* (կշիռը ենթաինդեքսի գնահատականում՝ 80%),
- *պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցություն* (կշիռը ենթաինդեքսի գնահատականում՝ 20%):

7. Գործարարության ազատություն: Այս ենթաինդեքսը ցույց է տալիս, թե որքանո՞վ են երկրի իրավակարգավորումների և ենթակառուցվածքների համակարգերը նպաստում ձեռնարկատիրական արդյունավետ գործունեություն ծավալելու հնարավորություններին: Այն հաշվարկվում է հետևյալ չորս ցուցանիշների հիման վրա՝

- *էլեկտրաէներգիայի հասանելիություն,*
- *գործարար միջավայրի ռիսկայնություն,*
- *իրավակարգավորումների որակ,*
- *տնտեսական գործընթացներում կանանց ներգրավվածություն:*

8. Աշխատանքի ազատություն: Ենթաինդեքսը հաշվարկվում է որպես հետևյալ ինը ենթագործոնների գնահատումով ստացվող արժեքների միջին թվաբանական.

- *նվազագույն աշխատավարձ,*
- *արհմիությունների իրավունքներ,*
- *ամենամյա վճարովի արձակուրդի հասանելիություն,*
- *հաստիքի կրճատման պատճառով աշխատանքից ազատման վերաբերյալ ծանուցման ժամկետ,*
- *հաստիքի կրճատման պատճառով աշխատանքից ազատման պարտադիր վճարի չափ,*
- *աշխատանքի արտադրողականություն,*
- *աշխատուժի մասնակցության գործակից,*
- *արտաժամյա աշխատանքի սահմանափակումներ,*
- *հաստիքի կրճատման պատճառով աշխատանքից ազատման իրավական կարգավորման առկայություն:*

9. Դրամավարկային ազատություն: Այս ենթաինդեքսը բնութագրում է գների կայունության ապահովման հարցում դրամավարկային քաղաքականություն իրականացնող մարմինների ազատությունը: Ենթաինդեքսի հաշվարկման համար օգտագործվում են հետևյալ երկու ենթագործոնները՝

- *գնաճի տեմպ (վերջին երեք տարիների կշռված միջինը),*
- *պետության կողմից գների արհեստական վերահսկման մեխանիզմի առկայություն:*

10. Առևտրի ազատություն: Ենթաինդեքսը արտահայտում է միջազգային շուկաներում ազատ առևտուր իրականացնելու գործում տնտեսական գործակալների հնարավորությունները: Դրա հաշվարկման համար օգտագործվում են հետևյալ երկու ցուցանիշները՝

- *մաքսատուրքի միջին կշռված դրույքաչափ,*
- *ոչ մաքսային խոչընդոտների որակական գնահատական:*

11. Ներդրումային ազատություն: Ենթաինդեքսն արտահայտում է ներդրումային կապիտալի շարժի վրա պետականորեն դրված սահմանափակումների մակարդակը: Այն հաշվարկելիս 100 միավոր առավելագույն

արժեքից յուրաքանչյուր սահմանափակման (ենթագործոնի) համար հանվում են տուգանային միավորներ՝ կախված դրա աստիճանից:

12. Ֆինանսական ազատություն: Ենթաինդեքսն արտահայտում է բանկային գործունեության արդյունավետության և պետական վերահսկողությունից ու միջամտությունից անկախության աստիճանը: Դրա հաշվարկը հիմնված է հետևյալ ցուցանիշների վրա՝

- *ֆինանսական ծառայությունների պետական կարգավորման աստիճան,*
- *բանկերի և այլ ֆինանսական ինստիտուտների գործունեության մեջ պետական միջամտության (ուղղակի կամ անուղղակի տնօրինմամբ) աստիճան,*
- *վարկերի տեղաբաշխման վրա կառավարության ազդեցություն,*
- *ֆինանսական և կապիտալի շուկաների զարգացածություն,*
- *միջազգային մրցակցության առումով բացություն:*

Նշենք, որ տվյալ տարվա ՏԱԻ-ի հաշվարկման համար դիտարկվել են նախանախորդ տարվա երկրորդ կիսամյակի և նախորդ տարվա առաջին կիսամյակի տվյալները:

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

2023թ. զեկույցում դիտարկվել է 184 երկիր, սակայն ՏԱԻ հաշվարկվել է միայն դրանցից 176-ի համար, քանի որ 8 երկրների համար 12 ենթաինդեքսներից ոչ բոլորն է հնարավոր եղել հաշվարկել: **ՏԱԻ-ի համաշխարհային միջինը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.7 միավորով (2022 թվականի զեկույցում ևս նշվում էր, որ նախկինի համեմատ այն նվազել էր՝ 1.6 միավորով) և կազմել 59.3 միավոր, որը վերջին երկու տասնամյակի նվազագույն արժեքն է: Արդյունքում համաշխարհային տնտեսությունը *«չափավոր ազատ»-ից դարձել է «հիմնականում ոչ ազատ»*:**

Զեկույցում նշվում է, որ ԿՈՎԻԴ-19 համավարակը և ռուս-ուկրաինական զինված հակամարտությունն ամբողջ աշխարհում հանգեցրել են տնտեսական ազատության սկզբունքներից (օրենքի գերակայություն, արդար մրցակցություն, շուկայական ազատություններ, կառավարությունների թափանցիկություն ու արդյունավետություն և այլն) շեղման: Մինչդեռ, այդ սկզբունքները լուրջ նշանակություն ունեն տնտեսությունների զարգացման և աճի խթանման գործում: Պատահական չէ, որ տնտեսապես ավելի ազատ հասարակությունները, որպես կանոն, ունեն տնտեսական գործունեություն իրականացնելու ավելի մեծ հնարավորություններ, ավելի բարձր կենսամակարդակ և կյանքի որակ, ինչպես նաև աղքատության ավելի ցածր մակարդակ:

Ինչպես և անցյալ տարի, այս տարվա Զեկույցում ևս նշվում է, որ, չնայած համաշխարհային տնտեսական ազատության նկատելի անկմանը, դրա բարելավման և բարեկեցության աճի միջև դրական կապը շարունակում է պահպանվել: Մասնավորապես, տնտեսապես *«ազատ»* և *«հիմնականում ազատ»* երկրների բնակչության կենսամակարդակը (նկատի է առնվում մեկ շնչի հաշվով եկամուտները)՝ միջին հաշվով ավելի քան կրկնակի գերազանցում է մնացած երկրների և եռակի՝ տնտեսապես *«ճնշված»* երկրների համադրելի ցուցանիշներին:

Ինչպես երևում է Գծապատկեր 2-ից, ՏԱԻ-ի 2023թ. գնահատականներով տնտեսապես *«ազատ»* է ճանաչվել ընդամենը 4 երկիր, *«հիմնականում ազատ»*՝ 23 երկիր, և ևս 56 երկիր համարվում է *«չափավոր ազատ»*: Մինչդեռ, 93 երկիր կամ ՏԱԻ-ի հաշվարկներում ներառված 176 երկրների շուրջ 53%-ը ստացել են 60 միավորից ցածր գնահատականներ և դասվում են *«հիմնականում ոչ ազատ»* (65 երկիր) կամ *«ճնշված»* (28 երկիր) տնտեսությունների շարքին:

Գծապատկեր 2. Տնտեսական ազատության աստիճանն աշխարհում՝ ըստ «Հերիթեյջ» հիմնադրամի դասակարգման, 2023թ., երկիր



Աշխարհի վարկանիշային աղյուսակը այս տարի ևս գլխավորում է **Սինգապուրը** (83.9 միավոր): Նրան ընդամենը 0.1 միավորով է զիջում երկրորդ հորիզոնականը զբաղեցնող **Շվեյցարիան**: Լավագույն եռյակը եզրափակում է **Իռլանդիան** (82.0 միավոր): Տնտեսապես ազատ երկրներից վերջինը **Թայվանն** է (80.7 միավոր): Նշենք նաև, որ 2022թ. համեմատ տնտեսապես ազատ երկրների թիվը նվազել է 3-ով: Մասնավորապես, խմբից դուրս են մնացել Նոր Զելանդիան, Լյուքսեմբուրգը և Էստոնիան: Վարկանիշային աղյուսակի ստորին եռյակում են **Վենեսուելան** (25.8 միավոր), **Կուբան** (24.3 միավոր) և **Հյուսիսային Կորեան** (2.9 միավոր):

Գծապատկեր 3-ում ներկայացված են 2021-2023թթ. ՏԱԻ-ի միջին գնահատականներն աշխարհի հինգ տարածաշրջաններում: Նկատենք, որ Եվրոպայի տարածաշրջանը 68.2 միավորով այս տարի ևս առաջատարն է, թեև այս տարածաշրջանում ՏԱԻ-ի միջին արժեքը 2022-ի համեմատ նվազել է (1.3 միավորով): Հարկ է նշել, որ միջին ՏԱԻ-ի նվազում արձանագրվել է բոլոր տարածաշրջաններում: Ինչպես և նախորդ տարի, Եվրոպան ՏԱԻ-ի միջին արժեքով համարվում է տնտեսապես *«չափավոր ազատ»*, իսկ մնացած բոլոր տարածաշրջանները՝ *«հիմնականում ոչ ազատ»*:

Նշենք, որ Հայաստանը 2023թ. ՏԱԻ-ի միավորով Եվրոպայի միջին գնահատականին զիջում է 3.1 միավորով: Նկատենք նաև, որ ՀՀ ՏԱԻ-ի գնահատականը 2023 թվականին ևս (ինչպես և նախորդ տարիներին) գերազանցում է համաշխարհային միջինին:

Գծապատկեր 3. ՏԱԻ-ի արժեքները ՀՀ-ում, աշխարհում և տարբեր տարածաշրջաններում, 2021-2023թթ.



3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի 2023 թվականի ՏԱԻ-ն 65.1 միավոր է, որը նախորդ տարվա ցուցանիշից պակաս է 0.2 միավորով: Այն ամենացածրն է 2001 թվականից ի վեր: Չնայած այս հանգամանքին, համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանը նախորդ տարվա համեմատ բարձրացել է 8 հորիզոնականով և զբաղեցնում է 50-րդ տեղը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նախորդ տարվա վարկանիշային աղյուսակում Հայաստանից ավելի բարձր հորիզոնականում գտնվող որոշ երկրներում 2023թ. ՏԱԻ-ի նվազումն ավելի մեծ է եղել (Գծապատկեր 4): Ըստ «Հերիթեյջի» դասակարգման՝ Հայաստանը, ինչպես և անցյալ տարի, գտնվում է տնտեսապես *«չափավոր ազատ»* երկրների խմբում

(հիշեցնենք, որ 2020 և 2021 թվականներին Հայաստանը 70 միավորը գերազանցող ՏԱԻ-ով տնտեսապես *«հիմնականում ազատ»* էր):

Զեկույցում նշվում է, որ **«Հայաստանում տնտեսական ազատության հիմքերը ամուր չեն պահպանվում անկախ դատական համակարգի կողմից, իսկ կոռուպցիան նվազեցնում է տնտեսական զարգացման հնարավորությունները»:**

Գծապատկեր 4. ՏԱԻ-ն Հայաստանում և ՀՀ դիրքը՝ ըստ ՏԱԻ-ի, 2017-2023թթ.



Աղյուսակ 1-ից երևում է, որ Հայաստանի ՏԱԻ-ի ենթաինդեքսներից շոշափելիորեն (11.5 միավորով) բարելավվել է միայն «Աշխատանքի ազատություն» ենթաինդեքսը (հիշեցնենք, որ այս ենթաինդեքսը 2022-ին նվազել էր 27.3 միավորով): Արդյունքում, այս ենթաինդեքսի մասով, Հայաստանը տնտեսապես *«ճնշված»* երկրների խմբից կրկին տեղափոխվել է *«հիմնականում ոչ ազատ»* երկրների խումբ: Մինչդեռ, **շոշափելի անկում է արձանագրվել այնպիսի ենթաինդեքսների մասով, ինչպիսիք են «Դրամավարկային ազատությունը» (նվազումը՝ 7.0 միավոր), «Հարկաբյուջետային կայունությունը» (նվազումը՝ 4.1 միավոր), «Պետական ծախսերը» (նվազումը՝ 2.6 միավոր) և «Արդարադատության արդյունավետությունը» (նվազումը՝ 1.6 միավոր): Ընդ որում, թվարկված ենթաինդեքսներից վերջին երեքը անցյալ տարի նույնպես նվազել էին՝ համապատասխանաբար՝ 8.8, 2.4 և 22.2 միավորով:**

«Դրամավարկային ազատություն» ենթաինդեքսի նվազումը հիմնականում պայմանավորված է բարձր գնաճով: Նվազմանը, թերևս, նպաստել է նաև գնաճի զսպման ուղղությամբ իրականացված պետական ակտիվ միջամտությունը (հաշվարկման մեթոդաբանության մեջ ամրագրված է, որ իդեալական է համարվում այն իրավիճակը, երբ գների կայունությունն ապահովվում է առանց

պետական միջամտության, իսկ այդպիսի միջամտության առկայության դեպքում բազային միավորը որպես «տուգանք» նվազեցվում է):

«Հարկաբյուջետային կայունություն» և «Պետական ծախսեր» ենթաինդեքսների նվազումը, թերևս, հետևանք է այն բանի, որ պարտքային միջոցները, ըստ էության, չեն վերածվել հանրային ներդրումների (հանրային բարիքի ստեղծում, տնտեսական ենթակառուցվածքների և մարդկային կապիտալի զարգացում և այլն), այլ պարզապես ուղղվել են ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը:

Աղյուսակ 1. ՏԱԻ-ն և դրա ենթաինդեքսները ՀՀ-ում, 2022-2023թթ.

		2022թ.	2023թ.	Փոփոխությունը (+/-)
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ		**65.3**	**65.1**	**-0.2**
Օրենքի գերակայություն	*Սեփականության իրավունքի պաշտպանություն*	*50.4*	*50.3*	*-0.1*
	Արդարադատության արդյունավետություն	*33.1*	*31.5*	*-1.6*
	Կոռուպցիայի բացակայություն	*50.8*	*51.6*	*0.8*
Պետական հատկածի կշիռ	*Հարկային բեռ*	*86.9*	*87.5*	*0.6*
	Պետական ծախսեր	*78.9*	*76.3*	*-2.6*
	Հարկաբյուջետային կայունություն	*75.5*	*71.4*	*-4.1*
Կարգավորումների արդյունավետություն	*Գործարարության ազատություն*	*64.9*	*64.9*	*0*
	Աշխատանքի ազատություն	*47.2*	*58.7*	*11.5*
	Դրամավարկային ազատություն	*77.5*	*70.5*	*-7*
Շուկայի բացություն	*Առևտրի ազատություն*	*73.6*	*73.6*	*0*
	Ներդրումային ազատություն	*75*	*75*	*0*
	Ֆինանսական ազատություն	*70*	*70*	*0*

Համաձայն Զեկույցի՝ Հայաստանում կայուն գործարար միջավայրի խոչընդոտները դեռևս հաղթահարված չեն:

Հայաստանի ենթաինդեքսներից երեքը՝ «Սեփականության իրավունքի պաշտպանությունը», «Արդարադատության արդյունավետությունը» և «Դրամավարկային ազատությունը», ցածր են դրանց համաշխարհային միջին մակարդակից: Ըստ Զեկույցի՝ աշխատանքի ազատության ոլորտը կարգավորող նորմատիվ-իրավական դաշտը համաչափ չի կիրառվում, բավական մեծ կշիռ ունի ստվերային աշխատաշուկան: Նշվում է նաև, որ «Հայաստանում օրենքի ընդհանուր գերակայությունը թույլ է»:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ, չնայած *կոռուպցիայի բացակայության ենթաինդեքսը* 0.8 կետով բարելավվել է, այնուամենայնիվ, **Զեկույցը փաստում է, որ կոռուպցիան ՀՀ-ում շարունակում է մնալ լուրջ հիմնախնդիր:**

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Հաշվետվության այս մասում կներկայացնենք ՏԱԻ-ի և վարկանիշային աղյուսակներում դրա դիրքի առնչությամբ տարբեր դասակարգումներով Հայաստանին խմբակից երկրների հետ համեմատականները:

Աղյուսակ 2-ից երևում է, որ **Հայաստանը 2023 թվականին Եվրոպայի տարածաշրջանում զբաղեցնում է 28-րդ հորիզոնականը:** Փաստորեն, չնայած ՏԱԻ-ի նվազմանը, Հայաստանի դիրքը եվրոպական տարածաշրջանում նախորդ տարվա համեմատ բարելավվել է 6 հորիզոնականով: Ընդ որում, պետք է նկատենք, որ բացի Հայաստանից, եվրոպական տարածաշրջանի ևս 15 երկրների դիրքը վարկանիշային աղյուսակում բարելավվել է՝ չնայած այդ երկրներում ՏԱԻ-ի նվազմանը՝ նույնպես պայմանավորված այն հանգամանքով, որ նախորդ տարվա վարկանիշային աղյուսակում ավելի բարձր հորիզոնականում գտնվող որոշ երկրներում 2023թ. ՏԱԻ-ի նվազումն ավելի մեծ է եղել:

Աղյուսակ 2. ՏԱԻ-ին Եվրոպայի երկրներում, 2022-2023թթ.

N	Երկիր	ՏԱԻ 2023	ՏԱԻ 2022	Փոփոխությունը (+/-)	Դիրք 2023	Դիրք 2022	Փոփոխությունը (+/-)
1	Շվեյցարիա	83.8	84.2	-0.4	1	1	0
2	Իռլանդիա	82.0	82.0	0.0	2	2	0
3	Էստոնիա	78.6	80.0	-1.4	3	4	1
4	Լյուքսեմբուրգ	78.4	80.6	-2.2	4	3	-1
5	Նիդեռլանդներ	78.0	79.5	-1.5	5	5	0
6	Դանիա	77.6	78.0	-0.4	6	7	1
7	Շվեդիա	77.5	77.9	-0.4	7	8	1
8	Ֆինլանդիա	77.1	78.3	-1.2	8	6	-2
9	Նորվեգիա	76.9	76.9	0.0	9	10	1
10	Գերմանիա	73.7	76.1	-2.4	10	11	1
11	Լատվիա	72.8	74.8	-2.0	11	13	2
12	Կիպրոս	72.3	72.9	-0.6	12	19	7
13	Իսլանդիա	72.2	77.0	-4.8	13	9	-4
14	Լիտվա	72.2	75.8	-3.6	14	12	-2
15	Չեխիա	71.9	74.4	-2.5	15	14	-1
16	Ավստրիա	71.1	73.8	-2.7	16	15	-1
17	Մեծ Բրիտանիա	69.9	72.7	-2.8	17	17	0
18	Պորտուգալիա	69.5	70.8	-1.3	18	21	3
19	Բուլղարիա	69.3	71.0	-1.7	19	20	1
20	Սլովակիա	69.0	69.7	-0.7	20	23	3
21	Վրաստան	68.7	71.8	-3.1	21	18	-3
22	Սլովենիա	68.5	70.5	-2.0	22	22	0
23	Լեհաստան	67.7	68.7	-1.0	23	25	2
24	Մալթա	67.5	71.5	-4.0	24	19	-5
25	Բելգիա	67.1	69.6	-2.5	25	24	-1
26	Խորվաթիա	66.4	67.6	-1.2	26	27	1
27	Ալբանիա	65.3	66.6	-1.3	27	30	3
28	***Հայաստան***	***65.1***	***65.3***	***-0.2***	***28***	***34***	***6***
29	Իսպանիա	65.0	68.2	-3.2	29	26	-3
30	Ռումինիա	64.5	67.1	-2.6	30	28	-2
31	Հունգարիա	64.1	66.9	-2.8	31	29	-2
32	Հյուսիսային Մակեդոնիա	63.7	65.7	-2.0	32	32	0
33	Ֆրանսիա	63.6	65.9	-2.3	33	31	-2
34	Սերբիա	63.5	65.2	-1.7	34	35	1
35	Բոսնիա և Հերցեգովինա	62.9	63.4	-0.5	35	36	1
36	Իտալիա	62.3	65.4	-3.1	36	33	-3
37	Ադրբեջան	61.4	61.6	-0.2	37	37	0
38	Մոնտենեգրո	60.9	57.8	3.1	38	41	3
39	Կոսովո	60.7	60.1	0.6	39	40	1
40	Մոլդովա	58.5	61.3	-2.8	40	39	-1
41	Հունաստան	56.9	61.5	-4.6	42	38	-4
42	Թուրքիա	56.9	56.9	0.0	41	42	1
43	Ռուսաստանի Դաշնություն	53.8	56.1	-2.3	43	43	0
44	Բելառուս	51.0	53.0	-2.0	44	45	1

Եվրոպայի լավագույն քաղաքը 2023-ին գլխավորում են Շվեյցարիան, Իռլանդիան, Էստոնիան և Լյուքսեմբուրգը (վերջին երկու երկրները 2022թ. համեմատ տեղերով փոխվել են):

Եվրոպայի տարածաշրջանում վատագույն արդյունքն ունեն Մոլդովան, Հունաստանը, Թուրքիան, Ռուսաստանը և Բելառուսը: Տարածաշրջանում միայն այս երկրներն են համարվում տնտեսապես *«հիմնականում ոչ ազատ»*: Ընդ որում, նշված երկրներից Մոլդովան և Հունաստանը 2022թ. *«չափավոր ազատ»* երկրների խմբում էին, իսկ Մոնտենեգրոն 2023թ. կարողացել է բարելավել իր ՏԱԻ-ն և *«հիմնականում ոչ ազատ»* երկրների խմբից տեղափոխվել *«չափավոր ազատ»* երկրների խումբ:

ՏԱԻ-ով Հայաստանը ԵԱՏՄ անդամ-երկրների թվում 2023-ին ևս առաջատարն է (Գծապատկեր 5): Նկատենք, որ այս տարի ԵԱՏՄ երկրներից միայն Ղազախստանի ՏԱԻ-ն չի նվազել: Հայաստանից բացի դիրքի բարելավում է ունեցել (1 հորիզոնականով) Ղազախստանը: Երկրներից ոչ մեկը խմբի փոփոխություն չի ունեցել:

Գծապատկեր 5. ԵԱՏՄ երկրների ՏԱԻ-ն և վարկանիշային աղյուսակում դիրքը, 2021-2023թթ.



Գծապատկեր 6-ից երևում է, որ **Հայաստանը հարևան երկրներից շարունակում է զիջել միայն Վրաստանին**, որի ՏԱԻ-ն կազմում է 68.7 միավոր: Հարևան երկրներից տնտեսական ազատության աստիճանով Հայաստանին 61.4 միավորով հաջորդում է Ադրբեջանը՝ համաշխարհային վարկանիշային աղյուսակում զբաղեցնելով 75-րդ հորիզոնականը: Թուրքիան 56.9 միավորով

չորրորդն է (համաշխարհային վարկանիշային աղյուսակում զբաղեցնում է 104-րդ հորիզոնականը), իսկ Իրանը 42.2 միավորով (համաշխարհային վարկանիշային աղյուսակում՝ 169-րդը) հարևան երկրների շարքում վերջինն է:

Գծապատկեր 6. ՀՀ-ի և հարևան երկրների ՏԱԻ-ն և վարկանիշային աղյուսակում դիրքը, 2021-2023թթ.



Աղյուսակ 3-ից երևում է, որ նախորդ տարվա համեմատ թե՛ ՏԱԻ-ի արժեքի, թե՛ միջազգային վարկանիշային աղյուսակում զբաղեցրած դիրքի փոփոխության առումով Հայաստանի հարևան երկրներից վատագույն արդյունքը գրանցել է Վրաստանը (ինդեքսը նվազել է 3.1 միավորով, իսկ դիրքի նահանջը 9 հորիզոնական է): Թուրքիայի գնահատականը չի փոխվել, սակայն դիրքը բարելավվել է 3 հորիզոնականով: Ադրբեջանի ՏԱԻ-ն նվազել է 0.2 միավորով, որը, սակայն, վարկանիշային աղյուսակում դիրքի փոփոխության չի հանգեցրել: Իրանի ՏԱԻ-ն նույնպես նվազել է 0.2 միավորով, սակայն վարկանիշային աղյուսակում դիրքը 1 հորիզոնականով բարելավվել է:

Աղյուսակ 3. ՏԱԻ-ի արժեքների և հորիզոնականների փոփոխությունը ՀՀ-ում և հարևան երկրներում, 2021-2023թթ.

Երկիր	ՏԱԻ					Դիրքը վարկանիշային աղյուսակում				
	Մեծությունը			Փոփոխությունը +/-		Մեծությունը			Փոփոխությունը +/-	
	2021	2022	2023	2021-2022	2022-2023	2021	2022	2023	2021-2022	2022-2023
Հայաստան	71.9	65.3	65.1	-6.6	-0.2	32	58	50	-26	8
Վրաստան	77.2	71.8	68.7	-5.4	-3.1	12	26	35	-14	-9
Թուրքիա	64.0	56.9	56.9	-7.1	0.0	76	107	104	-31	3
Ադրբեջան	70.1	61.6	61.4	-8.5	-0.2	38	75	75	-37	0
Իրան	47.2	42.4	42.2	-4.8	-0.2	168	170	169	-2	1

Նշենք, որ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը ընդգրկած են *«չափավոր ազատ»* տնտեսություններով երկրների խմբում, Թուրքիան գտնվում է տնտեսապես *«հիմնականում ոչ ազատ»*, իսկ Իրանը՝ *«ճնշված»* երկրների խմբում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով «Տնտեսական ազատության ինդեքս – 2023» զեկույցի ուսումնասիրությունը՝ արձանագրենք.

- **2023 թվականին ևս Հայաստանի տնտեսական ազատության ինդեքսը շարունակում է նվազել: Հայաստանը 65.1 միավոր ՏԱԻ-ով (որը նախորդ տարվա ցուցանիշից պակաս է 0.2 միավորով) համաշխարհային վարկանիշային աղյուսակում 50-րդն է, իսկ Եվրոպայի տարածաշրջանում զբաղեցնում է 28-րդ հորիզոնականը: Հայաստանի 2023թ. ՏԱԻ-ն 2001 թվականից ի վեր ամենացածրն է:**
- **Ինչպես և անցյալ տարի, Հայաստանը գտնվում է տնտեսապես *«չափավոր ազատ»* երկրների խմբում: Ի դեպ, 2020 և 2021 թվականներին Հայաստանը ներառված էր տնտեսապես *«հիմնականում ազատ»* երկրների խմբում:**
- **Զեկույցում նշվում է, որ «Հայաստանում տնտեսական ազատության հիմքերը ամուր չեն պահպանվում դատական համակարգի կողմից, իսկ կոռուպցիան նվազեցնում է տնտեսական զարգացման հնարավորությունները՝ շարունակելով մնալ լուրջ հիմնախնդիր»:**
- **«Դրամավարկային ազատություն» ենթաինդեքսը զգալիորեն նվազել է:** Ենթաինդեքսի 7.0 միավորով նվազումը հիմնականում պայմանավորված է բարձր գնաճով: Նվազմանը, թերևս, նպաստել է նաև գնաճի զսպման ուղղությամբ իրականացված պետական ակտիվ միջամտությունը:
- **Մտահոգիչ է *«Հարկաբյուջետային կայունություն»* և *«Պետական ծախսեր»* ենթաինդեքսների նվազումը (դրանք 2022-ին ևս նվազել էին): Նվազումը, թերևս, հետևանք է այն բանի, որ պարտքային միջոցները, ըստ էության, չեն վերածվել հանրային ներդրումների (հանրային բարիքի ստեղծում, տնտեսական ենթակառուցվածքների և մարդկային կապիտալի զարգացում և այլն), այլ պարզապես վերածվել են բյուջետային ընթացիկ ծախսերի:**
- ՏԱԻ-ի համաշխարհային միջինը կազմել է 59.3 միավոր՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.7 միավորով: Արդյունքում, համաշխարհային տնտեսությունը *«չափավոր ազատից»* դարձել է *«հիմնականում ոչ ազատ»*:
- Ըստ ՏԱԻ-ի կազմվող համաշխարհային վարկանիշային աղյուսակի վերին հորիզոնականները (լավագույն եռյակը) զբաղեցնում են Սինգապուրը,

Շվեյցարիան և Իռլանդիան: Վարկանիշային աղյուսակը եզրափակում են (ստորին եռյակում են) Վենեսուելան, Կուբան և Հյուսիսային Կորեան:

- ՏԱԻ-ով Հայաստանը ԵԱՏՄ անդամ երկրների թվում 2023 թվականին առաջատարն է:
- Հայաստանը հարևան չորս երկրներից շարունակում է զիջել միայն Վրաստանին:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*